ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Քրմոյանի՝ 2017 թվականի նոյեմբերի 5-8-ը Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝

Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Ավստրիայի Հանրապետություն, 2017 թվականի նոյեմբերի 5-8-ը

Հրավիրող կողմը՝

Միավորված ազգերի կազմակերպություն

Գործուղման նպատակը՝

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի 7-րդ նստաշրջանին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝

Նստաշրջանի ընթացքում քննարկվել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի իրականացման դիտարկմանը, կոռուպցիայի կանխարգելմանը, ակտիվների վերականգնմանը, տեխնիկական աջակցությանը և միջազգային համագործակցությանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության կողմից Միավորված ազգերի կազմակերպության 7-րդ նստաշրջանին ելույթով հանդես է եկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալն իր ելույթում անդրադարձել է հակակոռուպցիոն ոլորտում վերջին շրջանում իրականացրած նախաձեռնություններին՝ հատուկ շեշտադրելով ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջներին:

Մասնավորապես, ելույթում բարձրացված հարցերը հետևյալն են՝

1. Հակակոռուպցիոն նոր ինստիտուցիոնալ մարմնի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը: Այն գործելու է կոլեգիալության, ֆինանսական անկախության, հանրության առջև հաշվետվողականության և թափանցիկության, համագործա-

կցության ու քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա: Դրանով իսկ նոր հակակոռուպցիոն մարմինը կհամապատասխանի ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» պայքարի կոնվենցիայի 5-րդ հոդվածին:

2. Ապօրինի հարստացման քրեականացումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդրումը ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի շրջանակներում, ինչպես նաև եկամուտների և ակտիվների հայտարարագրման ինստիտուտի բարեփոխումը: Փոփոխության նպատակն է պաշտոնատար անձանց գործողությունների թափանցիկության և հանրության առջև հաշվետվողականության բարձրացումը:

3. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 33-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման կարևորագույն տարրերից մեկի՝ ազդարարման համակարգի ստեղծումը: Ազդարարման համակարգի մասին ՀՀ օրենքը միաձայն ընդունվեց ՀՀ ԱԺ կողմից: Օրենքն ապահովում է անվտանգության երաշխիքներ կոռուպցիոն դեպքերի մասին հաղորդում ներկայացնող անձանց համար: Ավելին, օրենքի համաձայն՝ էլեկտրոնային հարթակ կստեղծվի, որով մարդիկ հնարավորություն կունենան հաղորդում ներկայացնել անանուն: Նախատեսվում է էլեկտրոնային հարթակը ներդնել մինչև 2018 թվականի հունիսը: Օրենքն ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից:

4. Իրավական ակտերի մշակման միասնական էլեկտրոնային հարթակի՝ e-draft.am կայքի ներդրումն ու գործարկումը: Կարճ ժամանակահատվածում e-draft.am կայքը բավականին հայտնի է դարձել Հայաստանի Հանրապետությունում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, անկախ կազմակերպությունները, պետական պաշտոնյաներն օգտվում են կայքից՝ արտահայտելով իրենց տեսակետը տարբեր իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է էլեկտրոնային կառավարման այլ գործիքների ներդրումն ու գործարկումը, որոնք էականորեն կրճատում են վարչարարությունը և օգնում են կանխարգելել ու հաղթահարել կոռուպցիոն երևույթները:

5. Գնումների ոլորտում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումը և այլ կարևորագույն նախաձեռնությունները, որոնց նպատակը մի շարք հանձնարարականների, ներառյալ՝ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 9-րդ հոդվածի իրականացումն է:

Այս բոլոր քայլերում հաջողություն գրավականներից է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների և մասնակից երկրների հետ սերտ համագործակցությունը:

Հայաստանի մասնակցության արդյունքները

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի մասնակից պետությունների Համաժողովի 7-րդ նստաշրջանի ընթացքում Սուրեն Քրմոյանի գլխավորած պատվիրակությունը մի շարք կարևորագույն երկկողմ հանդիպումներ է ունեցել, որոնք կնպաստեն կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդմանը և խորացմանը:

Ներկայացվել են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արձանագրած հաջողությունները, մասնավորապես, հակակոռուպցիոն նոր ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումը, քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը, էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրումն ու արդյունավետ կիրարկումը, ինչպես նաև հակակոռուպցիոն մի շարք միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետությունն, իր լավագույն փորձը ներկայացնելով, նաև պատրաստակամություն է հայտնել համագործակցելու և կիսվելու այդ փորձով ցանկացած այլ պետության հետ:

Միևնույն ժամանակ, դեռևս կան մի շարք մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարել: Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է մշակել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն 2019-2022 թվականների համար և այդ փաստաթղթում ներառել այդ նոր մարտահրավերներն ու դրանց հաղթահարման միջոցներն: Մասնավորապես, 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կիրարկման վերանայմանը: